ԷԴՈՒԱՐԴ ՀՄԱՅԱԿԻ ԱՂԱՋԱՆՈՎ

ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն պետ

(1995-1998թթ.)

Էդուարդ Հմայակի Աղաջանովը ծնվել է 1952թ. հոկտեմբերի 28-ին՝ Ադրբեջանի ԽՍՀ Կիրովաբադ քաղաքում:

1969-1974թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում:

1974-1977թթ., համալսարանն ավարտելուց հետո, աշխատել է Աբովյան քաղաքի «Չափիչ» գործարանում որպես ավագ ինժեներ:

1977-1978թթ. աշխատել է «Կենտրոնաձույլ» գործարանում, որպես արտադրատեխնի-կական բաժնի պետ, իսկ 1978-1979թթ.՝ զբաղեցրել է նույն գործարանի նյութատեխնիկական բաժնի պետի տեղակալի պաշտոնը:

1980թ. աշխատել է ԽՍՀՄ պետպլանի նորմատիվների ինստիտուտի Հայաստանի մասնաճյուղում որպես կրտսեր գիտաշխատող:

1980-1985թթ. աշխատել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում որպես ավագ տնտեսագետ, իսկ 1985-1991թթ.՝ նույն ինստիտուտում սկզբում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, իսկ այնուհետև՝ գիտական բաժնի ղեկավար:

1986թ. նրան շնորհվել է տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նա մեկ մենագրության և 7 գիտական հոդվածների հեղինակ է: Գիտական աշխատանքը համատեղել է գործնական աշխատանքի հետ, աշխատելով որպես ՀԽՍՀ Գերագույն խորհրդի գլխավոր փորձագետ և ՀՀ նախագահի աշխատակազմի փորձագիտական խմբի գլխավոր փորձագետ:

1995թ.-ին Է. Աղաջանովը նշանակվել է ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության պետ, որտեղ և աշխատել է մինչև 1998թ.-ը:

Էդուարդ Աղաջանովը վախճանվել է 2008 թվականին: